ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆԻ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԻ ՄԻԱՀՅՈՒՍՄԱՄԲ

Սեպտեմբերի 13-ին, Վերացման Ս. Խաչի տոնին, Մայր Տաճարի զանգերը քաղցրալուր կանչով աղոթքի ու խոկման են հրավիրում Հայոց Եկեղեցու հավատացյալ զավակներին: Պատարագիչ Շահե արքեպս. Աճեմյանը բացառիկ ինքնամոռացությամբ մատուցեց Ս. Պատարագը, ուր Աստվածորդին ասես ոչ թե պատարագվում այլ հարություն առնելով՝ երկինք էր համբառնում՝ տանելով իր հավատացյալների երազներն ու բարի հույսերը. ո՛չ, Տերն այդ պահին հեռվում չէր, այլ եկեղեցում, իր հոտի մեջ: Եվ այդ օրը, լսելով Սրբազան Հոր «Յայնժամ երեւեսցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս» բնաբանով քարոզը, շատ սրտեր սրբվեցին ու տաճար դարձան:

Ս. Պատարագին ներկա էին նաև ԵՊՀ-ի Աստվածաբանական ֆակուլտետի ուսանողները: Այս հաստատության հիմնումը սերտորեն միահյուսված է Շահե արքեպս. Աճեմյանի անվան հետ: Աստվածաբանական ֆակուլտետը կոչված է ոչ միայն գիտականորեն պատրաստված հոգևոր սերունդ կրթել ու դաստիարակել, այլև անցյալի հոգևոր ու կրթական արժեքները փոխանցել գալիք սերունդներին: Ինչպես Սրբազան Հայրն է վկայում. «Պատահական չէ, որ ես մեր ծրագրերում ընդգրկել եմ ուխտագնացություն դեպի Հայոց եկեղեցիներ ու հուշարձաններ: Գիտելիքներին տիրապետելուն զուգահեռ, ուսանողը պետք է հաղորդվի նաև հայկական ավանդական մտածողության, իր նախնյաց ոգու, հավատքի հետ և լինի նրանց ճշմարիտ ժառանգորդը: Եկեղեցին ոչ միայն վերադարձնում է կորսված հավատը, այլև մոտեցնում նախնյաց արմատներին: Մեր հեռավոր նպատակն է՝ կրթել մի սերունդ, որ խորապես ներշնչված լինի ազգային ոգով: Ուստի Թարգմանչաց տոնին մեր սաները պետք է այցելեն Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, խորանի առջև ուխտելու, Ս. Մեսրոպի և Ս. Սահակի ոգուն հավատարիմ սրբազան պարտքը կատարել Եկեղեցու, ազգի, հայրենիքի նկատմամբ»:

Սրբազան Հայրը մշտապես պատգամում է իր սաներին. «Ոչ միայն հացի, այլև բանիւն Աստուծոյ», քանզի եթե ուրիշ ժողովուրդների կյանքում, գիտությունը, մշակույթը եղել է առաջընթացի սովորական արգասիք, մեզ՝ հայերիս համար լինելության, գոյատևելու, փորձություններն ու արհավիրքները դիմագրավելու եզակի հնար, առանց որի հազիվ թե կարողանայինք ոտք դնել երրորդ հազարամյակ: Բնականաբար այդ իմաստությամբ էր, որ Սրբազանը ԵՊՀ-ում հիմնեց և իր հայրական խնամքի առարկա դարձրեց Աստվածաբանական ֆակուլտետը, ցանկացավ իսկական գիտական կրթարանի կերպարանք հաղորդել, այն դարձնել «աղբիւր բացեալ գիտութեան Աստուծոյ»:

Շահե Սրբազանը. որ Աստվածաբանական ֆակուլտետի դեկանն է. այսօր երջանիկ է. քանզի իր 182 ուսանողներով ու պատրաստված դասախոսներով համալրված ֆակուլտետը քայլ առ քայլ հետևողականորեն իրագործում է այն նպատակը. որի համար կյանքի է կոչված՝ այնպես անել. որ ուսանողները անխոնջ աշխատասիրությամբ ու իմաստասիրությամբ աճեն. պայծառակերպվեն որպես վաղվա «զուսատու ճրագներ»: Այս մասին Սրբազանն ասում է. «Մեր սաները. չորս տարի սովորելուց հետո. պետք է ստանան բակալավրի վկայական. իսկ ցանկացողները ուսումը կշարունակեն ևս երկու տարի. որպեսզի ստանան մագիստրոսի աստիճան: Մեր ծրագրերը համապատասխանում են գիտական համալսարանների ծրագրերի մակարդակին. որն ընթանում է պատրաստված և գիտությունների մեջ մարզված դասախոսների անմիջական հսկողությամբ. որոնք ոչինչ չեն խնայում. որպեսզի մեր սաները ջերմ. հոգատար. սիրառատ մթնոլորտում գիտելիքներ ամբարեն: Դասերն ընթանում են շաբաթը վեց օր՝ կանոնակարգված ժամերով: Կրոնական և հոգևոր առարկաներին զուգահեռ (տեսական աստվածաբանություն. Հայ Եկեղեցու պատմություն. հայրաբանություն. հայ հին մատենագրություն. կանոնագիտություն) հմտանում են օտար լեզուների մեջ և իրենց գիտելիքները հարստացնում փիլիսոփայության. բարոյագիտության. հայոց պատմության քննությանը նվիրված առարկաներից:

Բնականաբար ուսանողների գիտելիքների հարստացմանը նպաստում են նաև դրսից հրավիրված դասախոսների դասընթացները: Սպասված և ցանկալի դասախոսներ են Վեհափառ Հայրապետը. Եգիպտահայոց թեմի առաջնորդ Զավեն արքեպս. Չինչինյանը. Սորբոնի համալսարանից Ս. Գրոց հունարենի մասնագետ տիկին Ֆրանսիս Լքլերը. Հռոմի համալսարանի դասախոս պարոն Դավիթը: Շատ կարևոր է. որպեսզի մեր սաները ծանոթանան արդի արևմտյան աստվածաբանական մտքին և ըմբռնումներին. ուստի նրանք շուտով հնարավորություն կունենան ունկնդրելու Դանիայից հրավիրված պրոֆեսորի դասախոսությունները: Այսօր քրիստոնեական Եկեղեցին ամբողջ աշխարհում վերածնունդ է ապրում: Եվ պատահական չէր. որ վերջերս մեկ միլիոն ուսանողներ էին ժամանել Փարիզ՝ Հռոմի Պապին հանդիպելու և նրա խոսքը լսելու ակնկալիքով. քանզի կրոնագիտությունը ոչ միայն ծանոթություն. իմացություն է. այլև մարդու ներաշխարհը կերտող գիտություն»:

Թերևս այս վեհ գիտությանը տիրապետելու արվեստն է. որ օգնել է Սրբազանին ճշմարիտ հարգանք հարուցել առ իր անձը. քանզի ուսանողների զրույցների մեջ Սրբազանը վերածվել է տիպար ուսուցչի և հոգևորականի. կենդանի լեգենդի: Իսկ առջևում սպասվում է. որ այս ուսումնական տարում 25 շրջանավարտների կհանձնվեն Աստվածաբանական ֆակուլտետի վկայականներ. և. եթե Աստված կամենա. տարիներ հետո 25-ը պիտի դառնա 50. 100...: Առաջինը լինելը ոչ միայն պատիվ է. այլև պարտականություն: Ասվածը թերևս բավարար համարվեր. եթե մի հանգամանք չգրավեր մեր ուշադրությունը. որի նկատմամբ լուռ անցնելը հազիվ թե արդարացի լինի:

Վստահաբար կարող ենք ասել, որ Շահե Սրբազանի մեծ ու փոքր ծրագրերի փառապսակը հանդիսացավ ԵՊՀ-ում նրա ջանքերով հիմնված Աստվածաբանական ֆակուլտետը՝ իր հարուստ գրադարանով, որտեղ Սրբազան Հոր հավաստմամբ՝ «Այս տարի 500-ից ավելի նոր գիրք ենք ստացել: Պրոֆեսոր Գոլցի հետ Լեփսիուսի ընտանիքը մի քանի անգամ այցելեց մեզ և 200 կտոր արժեքավոր գրականություն նվիրեց, բառարաններ, հանրագիտարաններ, Ս. Գրքի մեկնություններ, կրոնական բովանդակության այլ գրքեր՝ գերմաներեն լեզվով: Մեծ թվով ֆրանսիական գրականություն ենք ստացել վերապատվելի Սամվելյանի կողմից: Անգլիայից ստացել ենք նոր հրատարակված Ս. Գրքի աստվածաբանության, բարոյախոսության արժեքավոր աշխատություններ: Չիկագոյից վերապատվելի Կայայանը տարիներ ի վեր մեզ է ուղղարկում անգլերեն շատ հիմնարար հրատարակություններ, ինչպես հայրաբանական գրականության բազմահատոր շարքը»: Նման ծանոթություններն ու հոգևոր-գիտական կապերը մեզ հույս են ներշնչում, որ ԵՊՀ-ի Աստվածաբանական ֆակուլտետում կրթվում, հասունանում է բարձր բարոյական արժանիքներով և գիտելիքներով հայ երիտասարդության մի փաղանգ:.